



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, ՀայքիՀրապարակ 1

☎/0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019թ.

ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության
պատգամավոր Արմեն Եղիազարյանին

Ձեր 26.06.2019թ. թիվ 3650-19 գրությանը

Հարգելի պարոն Եղիազարյան

Ձորագետի կիրճում գործող Ստեփանավանի համայնքային աղբավայրի շահագործման վերաբերյալ տեղի է ունեցել քննարկում՝ մարզպետարանի և Ստեփանավանի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների մասնակցությամբ:

Կից ուղարկում եմ Ստեփանավան համայնքի ղեկավարի պատասխանը՝ աղբավայրի օրինականության և գործունեության վերաբերյալ:

Մարզպետարանը եղել և մնում է նույն դիրքորոշման, որ անհրաժեշտ է կառուցել միջազգային նորմերին համապատասխանող նոր աղբավայր՝ փակելով Ստեփանավանի և նմանատիպ բոլոր աղբավայրերը: Մարզպետարանի նախաձեռնությամբ, ինչպես նաև Ախթալա և Օձուն համայնքների աջակցությամբ 2018 թվականին փակվել է գործող 2 աղբավայր:

2019 թվականին նախատեսվում է փակել ևս մեկ աղբավայր՝ Թումանյան համայնքում: Թումանյան համայնքը, ինչպես Ախթալա և Օձուն համայնքները աղբը կտեղափոխի Ալավերդու աղբավայր:

Վերոնշյալ աղբավայրի կառուցման համար դիմել ենք ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ կառավարության կամ միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ որևէ նմանատիպ ծրագրի իրականացման դեպքում մարզն ընդգրկելու խնդրանքով:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

 Invalid signature

X 

ԱՄՐԱՎԵՏԱՆ

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ